7. Տես Յ. Մանանդեան, Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, հատոր Բ., մասն Ա., Երեւան, 1957, էջ 249 :

413-4 (8)), ուրեմն եւ ունէր քաղաքական բնույթ: Հայ ժողովրդի ղեկավարները ունենալով այն մեծ պատասխանատուութեան դիմաց — տակը ունենալով որ դրանք էր իրենց վրայ, մտածում էին հայ ժողովրդին փրկել իսպառ բնաջնջումից, եւ նրանք յանդեպին այն երբակացութեան, որ հայ ժողովուրդը այն ժամանակ միայն կը վարողանայ յարատեւել, երբ մշակութաբէս կը լինի ինքնուրոյն եւ այդ տեսակէտից բարձր կանգնած իր հարեւան ժողովրդներէն:

Կորիւնը եւ նրանից օգտւած Փարսեցին ու Ռորենացին, լիւնելով հոգեւորականներ (9), բնականաբար պէտք է, որ ամէն ջանք ի գործ դնէին, հողեւորականութեան վերագրելու համար հայ ժողովրդի լուսաւորութեան գործի յղացումը: Ահա թէ ինչու ժամանակի պատմիչները քիչ բան են հաղորդում տառերի դիւտի թուն դրդապատճառների մասին:

Վերոնշեալ խնդիրները ի նկատի ունենալով պարզում է, թէ ինչու, Վոսմշապուհ թագաւորը, Միջագետքում, Հարէյ քահանայի հետ հանդիպում ունենալիս, իստել էր հայ գրերի մասին, եւ ինչի՛ հետեւանքով ասորի քահանան յայտնել էր, որ հայ գրեր կան իր մի բարեկամի՝ Դանիէլ Կալիսկոպոսի մօտ:

Կորիւնի այս հաղորդումը ինքնին մի փաստ է յօդուտ այն բանի, որ Վոսմշապուհը, ի դէմս հայ ղեկավարների, մտածել է հայ գրերի մասին, հետաքրքրել է այդ ուղղութեամբ եւ այդ առթիւ, ըստ Երևոյցի, իօսակցութիւն ունեցել մի շարք յոյն ու ասորի ղիտնականների հետ:

Վոսմշապուհը, Հայաստան բերել տարու համար Դանիէլ ասորու մօտ գտնուող նշանադրերը, Հարէյ քահանայի մօտ է ուղարկում Վահրիճ անունով մէկին «հանդերձ հրտարտակալ»:

«Իսկ Հարէյին զայն ըուեալ, փութանակի հասանէր առ Դանիէլին, եւ նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանադրացն եւ

8. Տես Յ. Մանուղեան, Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, հատոր Բ., մասն Ա. էջ 435:

9. Աղմկը խօսելով Կորիւնի մասին ասում է. «Կորիւնը հասարակ կենսագիր չէ, նա եւ եկեղեցական գործիչ է եւ իրր այդպիսին պէտք է իր գրիչը համակերպէր յետեփեսոսեան տրամադրութեան»: Ն. Աղունց, Մաշթոց Իւ նրա աշակերտները ըստ օտար ազգիւրների, «Մերսոյ Մաշտոց» յօդածների ժողովածու, խմբ. Ա. Յովհաննիսեանի, Երևան, 1962, էջ 227:

արքա առեալ ի նմանէ առաքէր առ արքայն յերկիրն հայոց» (10) :

Դանիէլեան նշանագրերը Վաղարշարատում ենթարկւում են փորձարկման Սահակի եւ Մաշտոցի կողմից , սակայն նրանք դատնում են , որ այդ գրերը բաւական չեն արտայայտելու հայերէնի հնչիւնների բարդ կառուցւածքը , եւ «ոչ լինել բաւական այնու նշանագրօք ստույգ հոլովել զհեզենայ բառից հայկականց հաղներգալար , մուրացածոյիւն այնուիկի գծադրութեամբ» (11) :

Այդ մասին յայտնում են եւ թագաւորին :

Ս. Ղազարեանը Դանիէլեան գրերի մասին ասում է . «Այլլազգի գործիչներ հայ ժողովրդին անդամահատելու , նրան կուլտուրապէս կախեալ վիճակի մէջ դնելու եւ ինքնուրոյնութիւնից զրկելու մտտումներով սողորւած՝ իրենց հնարամտած գրերն էին ցանկանում կապել հայ ժողովրդի վզին , պարզ պատկերացներով , որ հայերը ուրիշ գիր ընդունելով՝ աստիճանաբար կը կորցնեն իրենց ինքնուրոյնութիւնը եւ նախ կուլտուրապէս , ապա Ֆիզիկապէս կը ձուլեն ուրիշ ժողովուրդների» (12) :

Դանիէլեան նշանագրերը «բարեբախտաբար մերժւեցին ժամանակի հայ գործիչների կողմից» (13) :

Մաշտոցը զստեղծու համար հայերէնի նշանագրերը , կամ ըրացնելու համար Դանիէլեան կուլած գրերի պակասը , ինչպէս կարծում են բանասէրներից ոմանք , իր աշակերտներին հետն առնելով , Մովսէի վրայով , գնում է Եդեսիա եւ այնտեղ նրանց «յերկուս բաժանեալ» մէկ մասին ուղարկում է Սամտասա յունարէն սովորելու , իսկ միւս մասին պահում է իր մօտ , Եդեսիայում , որպէսզի հետեւին ասորերէն լեզվին եւ հմտանան թարգմանական արւեստի մէջ : Եւ ինչպէս հաստատում է Աբեղեանը (14) , հէնց

10. Կորիւն , էջ 44 :

11. Ս. Խորենացի , Մատենագրութիւնի , Պատմութիւն Հայոց , 1843 , Վեներիկ , էջ 246 : Հետաքրքիր է նշել , որ այն հատւածը , շատ աննշան տարբերութեամբ , ունի եւ Փարպեցին : Տես Ղ. Փարպեցի , էջ 43 :

12. Ս. Ղազարեան , Հայոց գրական լեզուի պատմութիւն , հատար Ա. , Երեւան , 1961 , էջ 115 :

13. Նոյն տեղում :

14. Տես Ս. Աբեղեան , Մերոպ Մաշտոցը և գրի ու գրականութեան սկիզբը , «Մերոպ Մաշտոց» յօդւածների ժողովածու , էջ 269-278 :

نشریه دانشکده ادبیات اصفهان ۱۳۴۲ 27 (۲۶۳)

արդտեղ էլ նա յօրինում է հար նշանագրերը, ըստ Յ.Մանանդեանի հաշվումների, 392-3 թվականներին (15):

Այնուհետև նա արդտեղից անցնում է Սամոսատ:

Սամոսատում, Մաշտոցը, իր յօրինած գրերը ըստ ամենայնի կատարեալ դարձնելու համար, դիմում է Հռոփանոս անունով մի յոյն գրագրի: Հռոփանոսի մատին Արտնոցը գրում է, թէ նա ոչ աջ ոք է, եթէ ոչ Թղտղորոս Մուսուրուհատացու կամ Մամ - ուեսատացու աշակերտ Ռոփին(ոս) քահանան (16), որը 399ին մեկնում է Հոսմ «եւ աշտեղ ծանօթանալով Պելագիոս քահանային նորա միջոցով Պելագիական կոչւած վարդապետութեան իսկական հիմնադիրն եղաւ» (17):

Հռոփանոսը ծանօթանալով Մաշտոցի դատած գրերի հետ, ճշտում է արդ գրերի «դնրադոյնն եւ զլայնադոյնն, կարճն եւ դերկայնն, դառանձինն եւ դերկնաւորն» (18):

Կորիւնը այս խօսքերով ի՞նչ է սուղի ասել, կամ, այլ խօսքով, Հռոփանոսը Մեարտրեան գրերը ինչպիսի՞ մշակման է ենթարկել: Կորիւնի այդ խօսքերը բազմաթիւ ձեւերով մեկնարանել են բանասէրների կողմից, ամենից հաւանական բացատրութիւնը, ըստ իս, տւել է Ստ. Մարխասեանցը: Նա գրում է. «Կորիւնի յիշած տեխնիկական բառերը վերաբերում են տառերի հնչիւնական յատկութիւններին. «նուրը» գրերն են (ténues) Բ, Գ, Դ, Յ, Ծ, «բայնդոյններն» են թաւերը Փ, Թ, Ք, «կարճ» եւ «երկայն» գրերն են կարճ եւ երկայն ձայնաւորները» (19):

Մարխասեանցը բերելով մի շարք համոզեցուցիչ փաստեր, վերջնապէս գրում է. «Այսպէս կամ այնպէս Հռոփանոսի աշխատանքը մեր գրերի գիւտի գործում շատ կարեւոր է. գիտական ֆունտիկական աշխատանք եւ ամբողջ այրուբէնի դասաւորու-

15. Տես Յ. Մանանդեան, Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, հատար Բ., մասն Ա., էջ 266: Տես նաև Նոյնի Հայ գրերի գիւտի տարերւի հարցի շուրջ, «Մ. Մաշտոց» յօդւած. ժողովածու:

16. Տես Ն. Արտնոց, Մաշտոց եւ նրա աշակերտները ըստ օտար աղբիւրների, «Մ. Մաշտոց» յօդ. ժող., էջ 230:

17. Նոյն տեղում:

18. Կորիւն, էջ 48 եւ հոմ.:

19. Ստ. Մարխասեանց, Մատենագիտական դիտողութիւններ, Երեւան, 1961, էջ 33:

թիւն ըստ յունարէնի, եւ ոչ թէ լոկ գեղադրական: Նոյնիակ առաջին բառերը, որ դրւած են այս նորագիւտ հայերէն տառերով, այսինքն՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ» եւ այլն, դրւած են այդ յոյն Հոտփանոսի եւ ոչ թէ Մեսրոպի ձեռքով, ինչպէս վկայում է Կորիւնը» (20):

Մաշտոցը, իր երկու աշակերտներին՝ Յոհան Եկեղեցացու եւ Յովնէպի Պաղնադու հետ, հայերէնի այս նորագիւտ տառերով սկսում է թարգմանել Աստուածաշնչի «Առակաց» դիրքը (21):

Մաշտոցը, վերջացնելով իր աշխատանքները, հրաժեշտ է առնում յիշւած քաղաքներէ կալիակոպտաներից եւ հետեւ վերցնելով իր աշակերտներին ուղևորւում է զէպի Հայաստան եւ «հոգելից ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն, ի կողմ մանա Արարատեան դաւառին, առ սահմանօք Նոր Քաղաքին, ի վեցերորդ ամի Վոսմչապուհ արքային Հայոց Մեծաց» (22):

Վոսմչապուհ թագաւորի վերերորդ տարին համապատասխանում է 392—3 թվականին (387—8 + 5):

«Եւ արդ Եկեալ յիշխին մերձ ի թագաւորական քաղաքն, ազդ լինէր թագաւորին եւ սրբոյ կալիակոպոսին: Որոց առեալ դամենայն նախարարադունդ աւարանոյն ամբոխ, ի քաղաքէն կլեալ՝ պատահէին Երանելուոյն դաւամբ Ռահ գետոյն: Եւ պցան կալի արջոյնն միմեանց տուեալ, ուստի եւ բարբառօք ցնծութեան եւ երգօք հողեւորօք եւ բարձրագոյն օրհնութեամբք ի քաղաքն դառնային դաւորս տօնական ուրախութեամբ անցուցանէին»(23):

«Իս մի ազդային տօն էր» (24): – Գրում է Մ. Աբեղեանը:

Սահակն ու Մաշտոցը եւ Երեսիայում ու Մամուսատում ուսած երիտասարդները լծւում են դործի, որը թաղմանում է, որը տեղեկագրւում՝ ինքնուրոյն կրկեր, որը ուսուցանում է դրաւ – բոցներում եւ վերջապէս ամէն մէկը իր կարողութիւնների սահմաններում նպաստում է մեծ շարժման:

Առաջին հերթին թարգմանում է Աստուածաշունչ Մատենանը, բաւարարելու համար ժամանակի կրօնական պահանջները: Դրա

20. Նոյն տեղում, էջ 35:

21. Տես Կորիւն, էջ 50:

22. Նոյն տեղում:

23. Նոյն տեղում, էջ 54:

24. Մ. Աբեղեան, Մեսրոպ Մաշտոցը եւ գրի ու գրականութեան սկիզբը, «Մ. Մաշտոց» յօդ. ժող., էջ 285:

թարգմանութեան մէջ, ինչպէս վերաբերում է Կորիւնը, մեծ բաժին ունի Մաշտոցը, որը, իր երկու աշակերտների հետ միասին, սկսեց թարգմանել հէնց Սամուատում:

Դրանից յետոյ թարգմանում են մի շարք «ներքին» գրքեր (25), մեծ մասամբ եկեղեցական հայրերի թղթերը, քարոզները եւ աիւրբարական ժողովների որոշումները:

«Աստուածաշնչի եւ եկեղեցական գրքերի թարգմանութիւնը – ներն անհրաժեշտ էին: Աստուածաշնչի վրայ տւում էին տալիս, իսկարէս Աստուածաշունչ էին սովորեցնում: Դա եւ ընթերցանութեան, եւ կրօնի գիրքն էր» (26):

«Թարգմանութեան գործով, ինչպէս երեւում է, սրբաբարեւ է աւելի Մահակ Կաթողիկոսը... Մաշտոցը շրջում էր դաւառները, իսկ կաթողիկոսն իր պաշտօնի պատճառով մնում էր աւելի վաղարշապատում. տւտի եւ աւելի յարմարութիւն ունէր գրաւոր աշխատանքով պարասիրու» (27):

Այնուհետեւ, Մաշտոցը, թագաւորի հրամանով, անցնում է Մարաց կողմերը (28), որի բնակիչները «մասն խեցբեկագոյն եւ խոչորագոյն ըզլին՝ դժւարամատոյցք էին» (29): Եւ նա ու իր աշակերտները սկսում են աջը շրջաններում քարոզչութիւն անել եւ ժողովրդին «արարախօսս, հռետորաբանս, կրթեարս, աստուածատուր իմաստութեանն ծանօթս կացուցանէին» (30):

Այդպիսով աջը շրջանում, ուր ժողովուրդը ընդին չէր իւրացրել քրիստոնէական վարդապետութեան սկզբունքները, այս անգամ, Մաշտոցի յորինած գրքերի շնորհիւ, ըմբռնում է այն ինչ որ քարոզում է իրեն եւ այդպիսով միանգամ ընդ մի շտ մոտացութեան է յանձնում հեթանոսական հաւատալիքներն ու սնտոխարաչտութիւնները:

Համաձայն Կորիւնի, երբ փորձերը համոզեցին, որ այդ

25. «Ներքին» գրքեր են կոչւում այն գրքերը, որոնք ունեն եկեղեցական բովանդակութիւն:

26. Մ. Արեղեան, նոյն տեղում, էջ 288:

27. Նոյն տեղում:

28. «Մասիս լերան հիւսիս-արեւելեան կողմից սկսած, Երասլս գետի երկու կողմերը, Շարաւրի դաշտից մինչեւ Նախիջեւան, Երասլ եւ Ջուղա եւ այլն»: Կորիւն, էջ 107, ծանօթ. 55:

29. Կորիւն, էջ 54:

30. Նոյն տեղում:

զրերը ըստ ամենայնի կատարեալ են, սկսեցին աւելի մեծ թւով աչակերտներ հաւաքել եւ դրանցից քարոզիչներ պատրաստել, Հայաստանի խուլ ու յետամնաց գաւառներում քրիստոնէութիւնը տարածելու համար: Ամէն կողմից Վաղարշապատ են թափուած բազմաթիւ ուսումնասեւնչ երիտասարդներ, «քանզի յԱրարատեան դաւառին՝ ի կայս թագաւորացն եւ քահանայապետացն, բղխեցին Հայոց չնորհք պատուիրանացն Աստուծոյ» (31):

Վաղարշապատում հաւաքւած ուսանողները սկսեցին դար – դանալ եւ տոբորել Մահակի և Մաշտոցի հովանաւորութեան ներքոյ, սրանց կողմից բացւած դպրոցներում:

Այնուհետեւ Մահակը մնում է քաղաքամայրում, իսկ Մաշտոցը վերսկսում է իր քարոզչական շրջագայութիւնները «ի տիրուս հեթանոսաց» (32), իր հետ վերցնում է իր աչակերտներէ ից Տիրայր Խորձենացուն, Մուշէ Տարօնցուն եւ ուրիշների, որոնց անունը չեն յիշում ո՛չ Կորիւնը եւ ո՛չ էլ Փարպեցին ու Խորենացին:

Մաշտոցը առաջին հերթին գնում է Գողթն, եւ Շաբաթ իշխանի օժանդակութեամբ «յի առնէր զգաւառն ողջունիւ սուե – տարանին Քրիստոսի. եւ կարգէր յամենայն գիւղս քաւառին դասս սրբոց վանականաց» (33):

Գողթնից նա անցնում է Սիւնիք եւ Վաղենակ իշխանի ա – ջակցութեամբ շրջում է Սիւնիքի բոլոր կողմերը, եւ ամենուրեք նստարում իր առաքելութիւնը: Նա այստեղ եւս հաւաքում է բազմաթիւ աչակերտներ, յատկապէս այն շրջաններից, ուր գեոտիւրապետող էր հեթանոսական կրօնը, նրանց դաստիարակում է այնպէս, որ հէնց դրանցից կարգում է եպիսկոպոսներ եւ տեսուչներ Սիւնեաց եկեղեցիների համար: «Ապա եւ գերկիրն Սիւնեաց դասուք վանականաց ըսոյր» (34): Այդ ժամանակ Սիւնեաց իշխանութեան տանուտէրութիւնը անցնում է Վասակ Իշխանին (35), որը մեծապէս օժանդակում է Մաշտոցին իր առաքելութեան մէջ:

Մի առ ժամանակ յետոյ Մաշտոցը «հող ի մտի արկանէր...

31. Նայն տեղում, էջ 58:
 32. Նայն տեղում, էջ 60:
 33. Նայն տեղում:
 34. Նայն տեղում:
 35. Մա այն վասակն է, որ դարձաւ Հայաստանի մարգալտան 441–451 թւերին եւ յայտնի է որպէս դաւաճամ:

եւ վասն բարբարոսական կողմանն: Եւ ունայր կարգեալ նշանապարհս վրացերէն ընդունին» (36): Ուտտի իր լաւագոյն աշակերտներէրից մի քանիսին իր հետ վերցնելով, անցնում է Վրաստան, վրացական նորադիւար դրերով զբեկուց, կարգաւորելուց եւ օրէնքով յարգարկելուց յետոյ (37): Նա Վրաստանում ներկայանում է Բարուր թագաւորին եւ վրաց եկեղեցու եպիսկոպոս Մովսէսին: Նրանց յորդորում է եւ համոզում ընդունել իր առաջարկած գրերը: Այստեղ հարց է ծագում, թէ ինչո՞ւ Մաշտոցը մտահոգւում է նաեւ վրացական դրերով, կամ ի՞նչը դրեաց նր. ն այլ քայլն ստանալու: Այլ մասին ոչինչ չեն դրում մեր մատենագիրները, սակայն սրալը երեւում է, որ այս եւս կատարւած է քաղաքական մտահոգութիւններէր զրգւած:

Վրաց թագաւորը, ընդունելով Մաշտոցի առաջարկած գրերը, հրամայում է իր երկրի բոլոր կողմերից մանուկներ ժողովել «եւ տալ ի ձեռն վարդապետին» (38): Այդ աշակերտները Մաշտոցի ձեռքի տակ կրթւում եւ հմտանում են քրիստոնէական գրքերի մէջ ու նրանցից լաւագոյնները կարգւում են եպիսկոպոսս:

«Իսկ իբրև ընդ ամենայն տեղիս Վրաց կարգեալ զգործ ատուածապաշտութեանն, այնուհետև հրաժարեալ ի նոցանէ՝ գառնայր յերկիրն Հայոց եւ պատահեալ Մահակայ կաթողիկոսին Հայոց, պատմէր նմա զողջունէ եղերոցն» (39):

Մաշտոցը, Վրաստանից վերադառնալուց յետոյ, ձեռնարկում է մի շրջադարձութեան այն գաւառներում եւ տեղերում, ուր ինքը քարոզել էր նախապէս, եւ ուր, իր ջանքերով, բացել էին վարդապետանոցներ:

Այնուհետև նա «խորհուրդ ատմէր... վասն կէս արդին Հայոց, որ էր ընդ իջիտանութեամբ թագաւորին Հոռոմոց» (40):

Այդ նպատակով, նա, աշակերտների մի մեծ խմբով, անցնում է Արեւմտեան Հայաստան, ներկայանում է Անտիոքոս (ըստ

- 36. Կորիւն, էջ 62:
- 37. Տես նոյն տեղում:
- 38. Նոյն տեղում:
- 39. Նոյն տեղում, էջ 64:
- 40. Նոյն տեղում:

ումանց՝ Անատոլիոս) կուսակալին (41) նրանից զտնում լաւ ընդունելութիւն: Նա իր ճամբորդութեան նպատակի մասին յարտնում է Արեւմտեան Հայաստանի կուսակալին: Վերջինս մի գրութեամբ այդ մասին տեղեկացնում է Բիւզանդիայի Թէոդոս Բ. կայսեր (408–450), որովհետեւ մի կուսակալ նախ իրաւասու չէր Մաշտոցի առաջարկած խնդիրները մասին որոշում առլ եւ երկրորդ՝ նա չէր ցանկանայ վիսկած տեսնել յունական զբարոցները, իսկ նրանց փոխարէն բարգաւաճած՝ հարկականը: Մաշտոցը համոզելու համար կայսեր եւ պատրիարքին, որոշում է անձամբ դնալ նրանց մօտ, ուստի իր աշակերտներին տանում է Մելիտոլիէ (այժմ Մալաթիա), նրանց յանձնում է քաղաքի եպիսկոպոս Ակաակիտոսին եւ ինքը, հետն առնելով Գերջանի եպիսկոպոս Գինիթին եւ աշակերտներից մի փոքր խմբի, դնում է Կոստանդնուպոլիս ու ներկայանում՝ Թէոդոս կայսեր եւ Աստիկոս պատրիարքին (405–6–425):

Մաշտոցը նրանց բացատրում է հայ նշանադրերի դիւտի զրգուպատճառները, պատմում է ամբողջ անցողաբճի մասին եւ խնդրում՝ թող առլ Արեւմտեան Հայաստանում եւս հայկական դպրոցներ բաց անել: Կայսրը, նրա բացատրութիւնները ընթաց յետոյ, նրան առլիւ է մի հրամանագիր, «մասն մանկատոյն յաշակերտութիւնն առ ի կէս աղջկն Հայոց ժողովերոյ» (42):

Այդ շնորհի փոխարէն կայսրը սրահանջում է հալածել «բարբարիանս»ներին եւ վերացնել նրանց աղանդը:

Մաշտոցը հրաժեշտ առնելով դալիս է Արեւմտեան Հայաստան, ներկայանում է կուսակալին եւ յանձնում կայսեր հրամանադիրը: «Եւ նորա (կուսակալի-Մ.Տ.Գ.) առեալ տակերա կայսերական նշանօք, փուխար վարդաղակի գհրամանն կատարել» (43): Նա ուղարկում է սուրհանդակներ եւ ներկայացուցիչներ, երկրի բոլոր կողմերից մանուկներ հաւաքելու համար, որպէսզի ուսանեն նորարայ հայկական դպրոցներում. նրանց համար նշանակում է եւ թօշակ: «Եւ երանելին զվարդակատութիւն ի դործ արկեալ, եւ

41. Տես Յ. Մանանդեան, Մեսրոպ Մաշտոցը եւ հայ ժողովրդի պայքարը մշակութային ինֆուրմացիոնիստիկ համար, «Մեսրոպ Մաշտոց» յօդւածների ժողովածու, էջ 71:

42. Կորիւն, էջ 66:

43. Նոյն տեղում, էջ 68:

ժողովերոցն քաղցրացուցանէր» (44) :

Ինչպէս վերելում ասեց, կայրը իր այդ շնորհի փոխա –
րէն արահանջում է պարբար «բարբարիանոս» (45) աղանդի դէմ :
Մաշտոցը իր կրթական աշխատանքները վերջացնելուց յետոյ
«ձեռն արկանէր զլեզուստե՛հ և զկամակոր զբարբարիանոս աղանդն
քննելոյ» (46) :

Եւ երբ տեսնում է նա, որ չի կարողանում ուղղութեան բե –
րել ներանց «առեալ ի գործ արկանէր զթշուառացոյիչ դաւազանն ,
ծանրագոյն պատուհասիւք ի բանդա , ի տանջանս ի փելարանս : Իսկ
յորժամ ոյնու եւս սրակասեալք ի փրկութենէն դատակին , իոր –
տակեալս , սարս խանձեալս , մրեալս էւ գունակ դանակ իսաստ –
ուակեալս , ևւ յաշխարհէն վորգէին» (47) :

Ի նկատի ունենալով մի շարք քաղաքական խնդիրներ, լու –
սաւորութեան դործը Արեւմտեան Հայաստանում տեսնում է հայ
նշանադրերի գիւտից չուրջ 30 տարի յետոյ, 420–422 թթ. , Պարս –
կա-Բիւզանդական պատերազմների ժամանակ, ինչպէս պարզում
է Յ. Մանանդեանի հաշուումներից (48) :

Արտուղ արժեք կանգ առնել Կորիւնի մէկ հազորդման վրայ :
Կորիւնը գրում է, թէ Մաշտոցը, երբ գնացել էր Միջագետք յօրի –
նեցու համար հայերէն լեզուի նշանագրերը, հանդիպում է ունենում
Ամիդի Եպիսկոպոս Ակաղիտոսի Եղեսիայի եղիակապոս Ռարու –

44. Նայն տեղում :

45. «Բարբարիանոս աղանդը, աւելի փիշտ «բարբարիանոս»
համարում է մծղնէ (մեսալեան) աղանդը : «Այս մծղնէ աղանդի
հետեւողները կոչում են «պղծագործ» . նրանք «անխտիր հաղոր –
դակցութիւն էին պահանջում տղամարդկանց եւ կանանց մէջ» :
(Մ. Աբեղեան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, հատոր
Ա., Բէյրութ, 1955, էջ 124) :

46. Կորիւն, էջ 68 :

47. Նայն տեղում :

«Խանձել» նշանակում է՝ խարել, դաղել, խտրանել, կէծ
երկաթով խարել : «Մրեյ»՝ մրտտել, մուր ֆսել եւ այդպիսով աւ –
նարգել : (Տես Մ. Աբեղեան, Հայոց հին գրականութեան պատմու –
թիւն, հատոր Ա., էջ, 124) :

48. Տես Յ. Մանանդեան, Մեքոպ Մաշտոցը եւ հայ ժա –
ղովրդի պայքարը մշակութային ինֆուրմացիան համար,
«Մեքոպ Մաշտոց» յօդածների ժողովածու, էջ 74 :

լասի հետ (49) : Ահա աշտուեղ երեւան է գալիս մի սոնորախ հա – կատութիւն , որովհետեւ գիտենք , որ Ակակիտսը Ամիդի եպիսկոպոս է եղել 419–420 թւականից եւ Ռաքուրտան էլ Երեւանի եպիսկոպոս է եղել 412–435 թթ. (50) , իսկ հայոց գրերը գտնւել են , ինչպէս գրել ենք վերեւում , 392–3 թւականներին : Ուրեմն , ելնելով այս տւեալներից , այդ հանդիպումը չի կարող պատահած լինել ստուերի դիւտի ժամանակ , այլ , մի ուրիշ առիթով , 420 թւականից յետոյ եւ 435–ից առաջ (51) , հաւանաբար այն ժամանակ , երբ Մաշտոցը գտնուում էր Արեւմտեան Հայաստանում , եւ կամ մէկ այլ առիթով Եփեսոսի 431 թւի ժողովին առընչող դաւանաբանական խնդիրների կապակցութեամբ (52) :

Կորիւնի մէջ նկատուող այդ հակասութիւնը պէտք է բացատրել նրանով , որ այդ ժամանակ տիրող էր յետ–Եփեսոսեան մտայնութիւնը , ուստի եւ հերինակը դիտակցաբար տեսողում է այս հակասութիւնը , որպէսզի աղանդաւոր յորջորջումից զերծ պահի իր վարդապետներին՝ Մաշտոցին եւ Սահակին , որոնք տերտարարութիւն ունէին Նեստորիոսի ուսուցչի թէոդորոս Մոսուսեանի հետ , որը համարում է Նեստորական աղանդի դաժնարարանութեան հիմնադիրը : Այդ առիթու ն . Աղանդը գրում է . «Կորիւնը հասարակ կենսապիւր չէ , նա եւ եկեղեցական գործիչ է եւ իբր այդպիսին պէտք է իր գրիչը համակերպէր յետ–Եփեսոսեան տրամադրութեան» (53) :

Մաշտոցը դեռ գտնուում էր Հայաստանի բիւզանդական հատւածում , երբ աղանդերէն լեզուի գրեր գտնելու խնդրանքով նրա մօտ է գալիս «այդ մի երկէց աղուան ազգաւ , Բենիամին անուն» (54) , որից նա քննում է աղանդերէն լեզուն եւ նրանց հա –

49. Տես Կորիւն , էջ 46 : Իրաւացի կերպով կարծում եմ , որ Կորիւնի մէջ նշած Բաբիլաս անունը աղաւաղած ձեւն է Ռաքուրտաս անուն : Տես ն . Աղանդ , Մաշթոց եւ նրա աշակերտները ըստ օտար ազգիւրների , «Մեսրոպ Մաշտոց» յօդուածների ժողովածու , էջ 223 :

- 50. Տես ն . Աղանդ , նոյն տեղում :
- 51. Տես նոյն տեղում :
- 52. Տես նոյն տեղում , էջ 236 :
- 53. Նոյն տեղում , էջ 227 :
- 54. Կորիւն , էջ 68 :

մար էլ դտնում գրեր:

Այնուհետև նա, Արեւմտեան Հայաստանում եւս, իր դործը վերջացած համարելով, իր աշակերտներին երկուսին՝ Ենուկքին և Գանալին, վերակացու թողնելով այնտեղ, վերադառնում է Վաղարշապատ, ներկայանում Սահակ կաթողիկոսին, Վռամ շապուհի որդի Արտաշէա թագաւորին եւ ամբողջ բանակին:

Մի առ ժամանակ Վաղարշապատում մնալուց յետոյ, եւ հաւանաբար մի շարք կարեւոր եւ անյետաճղելի աշխատանքների մասնակցելուց յետոյ ուղևորում է Աղւանք ուր ներկայանում է Աղւանից Երեմիա եպիսկոպոսին և Արաւաղ թագաւորին, որոնք մեծ սրտուով ընդունում են նրան: Մաշտոցը բացատրութիւններ է տալիս թագաւորին և եպիսկոպոսին իր ճամբորդութեան նպատակի մասին, հաւանաբար բացատրում այն քաղաքական պայմանները, որոնք ստիպել էին գրեր դտնել հայ ժողովրդի եւ վրացիների համար, նաեւ երբ յայտնում է, թէ արդէն գտել է աղւանից լեզւի գրերն, Արաւաղ թագաւորն ու Երեմիա Եպիսկոպոսը «յանձն առեալ դպրութեանն հնազանդելոյ, տային եւս հրաման՝ ի վաւառաց ե ի տեղեաց իշխանութեանն իւրեանց բաղմաթիւ մանկանց յարուստ դպրութեան ածել եւ դումարել՝ ըստ արժանաւոր եւ պատեհ տեղեաց, դասս դասս դպրոցաց, եւ ունիկս կարօքի ի դարմանս» (55):

Մինչեւ որ բոլոր կողմերից աշակերտներ հաւաքւէին, Աղւանից Եպիսկոպոս Երեմիան ձեռնարկում է «ստուածային գրոց» թարգմանութեան:

Այստեղ եւս վարդապետելուց, սովորեցնելուց եւ ուսուցանելուց յետոյ, Մաշտոցը, ըստ իր սովորութեան, իր աշակերտներին մի քանիսին վերակացու է նշանակում Աղւանքում բացւած դպրոցների վրայ, որից յետոյ անցնում է Գարդման, ապա՝ Տաշիրք եւ վերջապէս երկրորդ անգամը լինելով՝ Վրաստան: Իր այս շրջադաշութիւնների ժամանակ եւս ամենուրեք բաց էր անում նորանոր դպրոցներ եւ կամ քննութեան ենթարկում արդէն վաղուց դործող դպրոցների դործունէութիւնը, այլ իսօքով ամենուրեք կատարում է լուսաւորական եւ կրթական գործեր:

Մաշտոցը այեւս վերջացած համարելով իր ուսուցչական եւ քարտզական գործերն ու շրջադաշութիւնները, վերջնակապէս հատաստում է Վաղարշապատում, ուր, հանգիստ սրտով,

55. Նոյն տեղում, էջ 70:

աւելի շատ հնարաւորութիւններ է ունենում սրարապելու գրաւոր աշխատանքներով: Նա եւ Սահակ կաթողիկոսը մտածում են «դիւրեանց ազգին գգալրութիւնն առաւել յարգել եւ դիւրացու – ցանել» (56): Այդու կաթողիկոսը սկսում է նախկինի տէր գրադւել թարգմանութեամբ եւ նորանոր գործերով հարստացնել հայ թարգմանական գրականութիւնը: Թարգմանական գրականութեանը զարկ տալու համար, նրանք իրենց աշակերտներին երկուսին՝ Յովսէփին (57) եւ Եզնիկին ուղարկում են Եդեսիա, որպէսզի հմտանան ասորերէն լեզուի մէջ եւ հայերէնի թարգմանեն ասորի հայերի աւանդութիւնները:

Բացի յիշածներից, որոնք հետագային անցնում են Կոստանդնուպոլիս յունարէնում եւս հմտանալու համար, Կոստանդնուպոլիս են ուղարկում նաև Ղևոնդին ու Կորիւնին, որոնք այստեղ միանում են Եզնիկին, սովորում յունարէն եւ հմտանում այս լեզուում: Այնուհետև վերցնելով «ատուածատուր գրոց» «հաստատուն» օրինակներ, «չնորհագիր» հայերի աւանդութիւնները եւ Նիկիայի ու Եփեսոսի ժողովների կանոնները վերադառնում են Հայաստան, Եփեսոսի ժողովից (431 թ.) յետոյ:

Որից յետոյ Սահակը, Եզնիկի հետ միասին, վերաջնուցութեան է ենթարկում Ատուածաշնչի առաջին «փուլանակի» թարգմանութիւնը, ըստ այն ընտիր օրինակի, որ բերած էր Կոստանդնուպոլսից, վերոյիշեալ աշակերտների միջոցով:

Ինչպէս նշեցինք, Մաշտոցը, իր երկարամեայ շրջադարձութիւններից եւ կրթական տրամաջան աշխատանքներից յետոյ, վերջապէս հաստատուում է Վաղարշապատում եւ աւելի հնարաւորութիւն ունենում գրական աշխատանքով գրադուելու: Այդ առթիւ Կորիւնը վկայում է, թէ «ասնպիսի առաւել եւ յարձրաւ գոն վարդապետութեամբն՝ սկսեալ Երանեչոյն Մաշթոցի ճառս յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բարձրագիմիս ի լուսաւորութեո՛ւ եւ ի հիւթոյ գրոց մարգարէականայ կարգել եւ յօրինել, լի ամենայն ճաշտօք աւետարանական հաւատոցն ճշմարտութեան» (58): Մ. Արեղեանը գրում է, թէ Կորիւնը վերոյիշեալ հաստատում ակնարկում է Մաշտոցի «Յանախապա-

56. Նոյն տեղում, էջ 74:
 57. Այս Յովսէփը հարևանաբար Յովսէփ Պալմացին է: (Տես Կորիւն, էջ 117, ծանօթ. 119):
 58. Կորիւն, էջ 78:

(۲۰۳) 37 نشریه دانشکده ادبیات اصفهان ۱۳۹۳

տում ճառք» երկը, որը ցարդ, իր կրօնական բովանդակութեան պատճառով վերագրւում էր Գրիգոր Լուսաւորչին, սակայն բանասիրական քննութիւնները պարզեցին, որ այս երկը պատկանում է Մաշտոցի գրչին եւ գրւել է շուրջ 420-ական թւականներին (59):

«Այս ճառերի մէջ հեղինակը ձգտում է՝ խրատել եւ ուսուցանել: Դրանք «հոգեւոր խրատներ» են, որոնց ընդհանուր խընդիրն է քրիստոնէական ստուամն ու բարոյականութիւնը: Ճառասուտը քարոզում է քրիստոնէական առաքինի կեանքի պայմանները՝ բարքերի մաքրութիւն, ժուժկալութիւն, սէր, հեղութիւն, պիտութիւն: Նա յորդորում է՝ բարի սնել, հեռու մնալ անառակութիւնից, չարից, եւ նմաները: Եւ այս ամէնը մի ընդհանուր վերջնական նպատակի համար, որ է «աշխարհի խաղաղութիւնն ու շինութիւնը» (60):

«Յաճախապատում ճառք»ի մէջ կան եւ այլ բովանդակութեամբ ճառեր:

Բացի վերոյիշեալ երկից, կտրիւնը գրում է, թէ Մաշտոցը գրել է նաեւ խրատական թղթեր եւ ուղարկել զանազան դաւառներ, սակայն դրանցից եւ ոչ մէկը չի հասել մեզ (61):

Մաշտոցին են վերագրում եւ մի շարք հոգեւոր երգեր (62):

Մերոյ Մաշտոցը վախճանեց Վաղարշապատում 440 թւի մհհեկան ամսի 13-ին, որ համապատասխանում է փետրւարի 17-ին, և մեծ շուքով թաղեց Վահան Ամատունու՝ իր աշակերտի, Օշական գիւղում (63):

439 թւի նաւասարդի 30-ին (սեպտեմբերի 7-ին), արդէն մահացել էր Սահակ կաթողիկոսը Բագրեւանդի Բլրոցաց գիւ-

59. Տես Մ. Աբեղեան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, հատոր Ա., էջ 125 եւ հոմ.:
60. Նոյն տեղում, էջ 127:
61. Տես նոյն տեղում, էջ 125:
62. Այդ մասին մանրամասն տեսնել Հ.Ներսէս Տէր-Ներսէսեան, Ս. Մեսրոպ Մաշտոց եւ ապաշխարութեան շարականները, «Բազմավեպ», ՃԻ (1962), էջ 253 եւ հոմ.:
63. Տես Մ. Աբեղեան, Մեսրոպ Մաշտոցը եւ հայ գրի ու գրականութեան սկիզբը, «Մեսրոպ Մաշտոց» յդիւմների ժողովածու, էջ 295:

դում եւ ամփոփուել Տարօնի Աշտիշատում (64) :

* * *

Հայ դրերը, պատմութեան ըմբացքում, արդարացրել են իրենց գիւտը յղացողների մտահոգութիւնները :

Հայ դրերի միջոցով ինքնուրոյնացած Հայ մշակոյթը եղաւ մի անխորտակելի պատմէջ եւ անխոցելի դրահ Հայաստան ասպատակ փոռող ճուղարար բորոր ուժերի դէմ, որի միջոցով Հայը կարողացաւ յարատեւել եւ ապրել մինչեւ այսօր :

Հայ ժողովրդի յարատեւման դադանիքը պիտի փնտռել Դ. եւ Ն. դարերում, երբ մեր հեռատեա Հայրերը լաւապէս զգացին, թէ ապագայում ի՞նչ վտանգ է սղառնարու իրենց ազգին, եւ իրենց անգերազանցելի մտայրացումով փրկեցին մի ժողովուրդ, մի «ածու փոքր», որ էր եւ է, — եթէ սնայարծութիւն չլինի, — «հանուրց հիւսիտահրճանց վեհադոյն», մինչդեռ շատ ժողովուրդներ, շատ հոր ազգեր այլեւս գոյութիւն չունեն եւ անցել են պատմութեան գիրիկը :

Բացի սրանից, Հայ մշակոյթի նպատը մեծ է եւ համաշխարհային մշակոյթի գանձարանին : Հէնց միայն դրականութեան եւ պատմագրութեան ասպարէզում այնքան մեծ նպատ է բերել Հայ գրականութիւնը, որի գնահատումը խիստ դժուար է :

Այսօր գոյութիւն չունեն բազմաթիւ մեծարժէք գործերի բնագրերը, սակայն կան նրանց հայերէն թարգմանութիւնները, որոնք արդէ բնագրական արժէք են ստացել եւ որպէս աջակիսին ներկայացել հանուր մարդկութեան :

Միջին Արեւելքի ժողովուրդներից ո՛ր մէկը կարող է պարծենալ, թէ իր պատմութիւնը գրելու համար կարիք չունի օգորւելու Հայ պատմագիրներին եւ ժամանակագիրների հաղորդումներին :

Արդեօք, եթէ գոյութիւն չունենային Հայ պատմագիրների երկերը, կարելի պիտի լինէ՞ր ճշգրտորէն եւ մանրամասն կերպով հիւանել Հայաստանին սահմանակից ժողովուրդների շատերի պատմութիւնը :

64. Տես նոյն տեղում :

(۲۵۱) 39

نشریه دانشکده ادبیات اصفهان

۱۳۴۳

էլ չեմ ուզում խօսել հայ մշակութի միւս բնադաւանների
բերած նպատի մասին՝ համաշխարհային մշակութի դանձարա-
նին, որովհետեւ այդ մասին շատ երկար կարելի է գրել, որը
սակայն այստեղ դուրս է մեր նպատակից :

